Հավելված
ՀՀ առաջին փոխվարչապետի 2018 թ.
դեկտեմբերի 10-ի N 355 - Ա
որոշման

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ, ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻՆ

1.	Ծրագրի նպատակը	«Շեն» ԲՀԿ-ի ուսումնասիրությունների միջոցով բացահայտված և համայնքային ժողովներում հաստատված կրթական հետևյալ խնդիրների լուծումը՝ 1. Դպրոցների մարզադահլիճների ու մարզահրապարակների, մանկապարտեզների վերանորոգում, կահավորում 2. Համայնքային կենտրոնների հիմնում, նորոգում, կահույքի ու համակարգիչների տրամադրում 3. Դպրոցահասակ երեխաներին էկոլոգիական գյուղատնտեսության տարրերի ծանոթացում՝ արտադասարանային դասընթացների կազմակերպման և դպրոցամերձ գոտիների բարեկարգման միջոցով
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Սահմանված կարգով ստանալ հարկային և մաքսային արտոնություններ
3.	Բարեգործը	1. «Շէն-Ֆրանսիա» բարեգործական կազմակերպություն, հասցեն՝ 24 rue de Maubeuge, 75009, Paris, France 1 2. Հաց աշխարհին – Գերմանիայի Եկեղեցիների Ընկերակցություն, Bread for the World-Church Development Service Հասցեն՝Caroline-Michaelis-Str.1, 10115 Berlin, Germany 3. Շվեյցարիայի Միջեկեղեցական աջակցություն (EPER), հասցեն՝ BD de Grancy 17 bis Case postal 536, CH-1001 Lausanne, Switzerland
4.	Ծրագիրը կատարողը	«Շեն» բարեգործական հասարակական կազմակերպություն, հասցեն՝ քաղ. Երևան, Նալբանդյան 110, հեռ. 060 499 010, 010 567031, ՀՎՀՀ՝ 01503283

5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի, Կոտայքի մարզերում, ԼՂՀ հեռավոր, սահմանամերձ գյուղեր և նախկին շրջկենտրոններ, բնագավառը՝ սոցիալական, կրթական
6.	Ծրագրի բյուջեն	300.000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ՝ հինգ տարվա համար
7.	Բարեգործություն ստացողը	Ծրագրի շահառուներն են ՀՀ Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռո, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի, Կոտայքի մարզերի, ԼՂՀ հեռավոր, սահմանամերձ գյուղերի և նախկին շրջկենտրոնների երեխաները: Գյուղերը, որտեղ կիրագործվեն մարդասիրական ծրագրեր, կընտրվեն «Շեն» ԲՀԿ-ի ուսումնասիրությունների միջոցով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված 2014-2015 թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի և ՀՀ կառավարության 2017-2022 թթ. ծրագրի «Սոցիալական ոլորտ» բաժնում տեղ գտած դրույթները:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2019 թ. հունվարի 1-ից մինչև 2023 թ. դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2019-2023 թթ. ընթացքում մասնակիորեն կնորոգվեն և կկահավորվեն դպրոցական սպորտային դահլիճներ (արժեքը 80.000 ԱՄՆ-ի դոլար), մանկապարտեզներ (արժեքը 140.000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ) և համայնքային կենտրոններ(արժեքը 80.000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ)
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ սարքավորումներ և այլ պարագաներ, շինանյութեր՝ նախատեսվող գինը՝ (200.000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ), որից 160.000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ներքին շուկայում գնվող և 40.000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ներկրվող: Կատարվելիք շինարարական աշխատանքների արժեքը կկազմի 100.000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Տվյալ ծրագրի շրջանակներում կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:
	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների	«Շեն» ԲՀԿ-ի առաջարկող ծրագրի իրականացման ընթացքում համագործակցելու է ՀՀ և ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունների, ինչպես նաև նշված մարզերի

	հետ	տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	• «Շեն» կազմակերպության լիազորված ներկայացուցիչները պարբերաբար պետք է այցելություններ կատարեն ծրագրերի իրագործման վայրեր՝ աշխատանքների ընթացքը ստուգելու համար: • Համաձայն պայմանագրերում նշված ժամկետների՝ շնորհատու կազմակերպությունները կիրականացնեն ծրագրերի անկախ վերահսկում: • Համաձայն ընդունված կարգի՝ պարբերական հաշվետվություններ կներկայացվեն Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ